

ՀԱՆՔԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ 2021-2022ԹԹ. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՍՏԱԿԵՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Աննա Ռուզվելտի Մակարյան

Հոդվածը ստացվել է՝ 01.10.23, ուղարկվել է գրախոսման՝ 10.11.2023, երաշխավորվել է տպագրության՝ 07.12.23

Ներածություն: 2021-2022թթ.-ներին Հանքագործական արդյունաբերությանը վերաբերող մի շարք օրենսդրական փոփոխություններ են ձեռնարկվել կառավարության կողմից: 2021թ.-ի հուլիսի 15-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունված «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն նոր տուրքի տեսակ սահմանվեց՝ արտահանման տուրք ԱՄ ղասակարգչի 2603000000, 2613, 7202700000, 8102 (բացառությամբ 810297000) ծածկագրերին դասվող արտահանվող պղնձի, մոլիբդենի խտահանքի, ինչպես նաև մոլիբդենի 1 տոննայի դիմաց լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավատարմագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրների (մինչև 100 կգ-ի դեպքում գործելու էր բազային տուրքի դրույքաչափը) հետևյալ չափերով՝ պղնձի խտահանքերի դեպքում՝ 160,000, մոլիբդենի խտահանքերի դեպքում՝ 800,000, և մոլիբդենի դեպքում՝ 1,000,000 ՀՀ դրամ¹: Իսկ արդեն 2022թ.-ի հունիսի 15-ին ՀՀ կառավարությունը օրենսդրական նախաձեռնությամբ հանդես եկավ՝ չեղարկելով արտահանման տուրքը նշված ծածկագրերով ապրանքները դեպի երրորդ երկրներ արտահանելու պարագայում²: Այդ նույն օրը ՀՀ ԱԺ-ն ընդունեց օրենք³, որով ներկայացվեց ՀՀ-ում ռոյալթիի հաշվարկի նոր մեթոդաբանությունը, որը ուժի մեջ մտավ 2023թ.-ի հունվարի 1-ից և համաձայն որի այժմ կիրառվում է ռոյալթիի հաշվարկի հիբրիդային համակարգը, երբ աղվալորեմային ռոյալթիի (կամ արժեքի վրա հիմնված) ֆիքսված դրույքաչափը համակցվում է շահույթի հիման վրա հաշվարկվող ռոյալթիի հաշվարկի մոտեցման հետ:

Համաձայն Դոխոյանի և այլոց (2023թ.) հաշվարկների պղնձի խտահանքի դեպքում 1 տոննայի դիմաց վճարվող արտահանման տուրքը 2022թ.-ի հունիսին միջինում կազմում էր արտահանված մեկ տոննայի (ՀՀ դրամով արտահայտված)

¹ ՀՀ օրենքը ««Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» առ 15.07.2021թ., ՀՕ-310-Ն

² ՀՀ օրենքը ««Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» առ 15.06.2022թ., ՀՕ-150-Ն:

³ ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» առ 15.06.2022թ., ՀՕ-149-Ն:

վաճառքից ստացվող հասույթի 22%-ը¹, ինչը արդեն իսկ բավականին մեծ ցուցանիշ էր, որը փաստում էր ընկերությունների համար լրացուցիչ զգալի հարկային բեռի մասին, իսկ կառավարության համար՝ լրացուցիչ զգալի հարկային եկամուտների: Հեղինակների հաշվարկը ընդգրկել է միայն 2022թ.-ի առաջին կիսամյակը, այդ իսկ պատճառով կարևորվում է տուրքերի մեծության հաշվարկը 2022թ.-ի համար, որի չեղարկման պարագայում անհարժեշտ էր ունենալ վերջիններիս մեծությունը՝ և պարզելու դրա ազդեցությունը պետական բյուջե հավաքագրվող հարկային եկամուտների վրա կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում: Մյուս կողմից 2023թ.-ի հունվարի 1-ից ուժի մեջ մտած ռոյալթիի հիբրիդային համակարգը նույնպես ինքնին ուղղված է ավելացնելու բյուջե վճարվող հարկային եկամուտները, սակայն այս պարագայում կարևոր է պարզել, թե ո՞ր գործոններով պայմանավորված այն կարող է ավելացնել հարկային եկամուտները, արդյո՞ք հնարավոր կլինի փոխհատուցել պետական տուրքերի չեղարկումից հետո հարկային եկամուտների կրճատումը և արդյո՞ք նոր համակարգը լրացուցիչ հարկային բեռ չի հանդիսանա հանքագործական ոլորտը ներկայացնող ընկերությունների համար: Երկու տարվա մեջ նաև տեղի էին ունեցել օրենսդրական փոփոխություններ, որի պարագայում հարց է առաջանում որևիցե այլ փոփոխության նպատակահարմարության վերաբերյալ՝ հատկապես կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում:

Հետևաբար, հանքագործական արդյունաբերությանը վերաբերող 2021-2022թթ.-ներին օրենսդրական փոփոխությունների ազդեցության բացահայտումը հավաքագրվող հարկային եկամուտների վրա կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում և համապատասխան առաջարկությունների ներկայացումն էլ պայմանավորում է **տվյալ ուսումնասիրության արդիականությունը**:

Հոդվածի **հիմնական նպատակն** է ներկայացնել ՀՀ հանքագործական արդյունաբերությունը ներկայացնող ընկերությունների կողմից դեպի երրորդ երկրներ արտահանելու դեպքում վճարման ենթակա հաշվարկված արտահանման տուրքերի, հաշվարկված հարկային և ռոյալթիի (արտահանման հանդեպ) բյույանսի գործակիցների վերլուծության հիման վրա կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում հարկային եկամուտների վրա օրենսդրական փոփոխությունների հնարավոր ազդեցությունը, ինչպես նաև հստակեցնել օրենսդրական փոփոխությունների հետ կապված առաջնահերթությունները:

Տվյալ նպատակին հասնելու համար դրվել են հետևյալ **խնդիրները**՝

- Հաշվարկել ՀՀ հանքագործական արդյունաբերությունը ներկայացնող ընկերությունների կողմից դեպի երրորդ երկրներ արտահանելու դեպքում վճարման ենթակա արտահանման տուրքերի մեծությունները, պարզելու վերջին-

¹ Dokholyan, S.V., Makaryan, A.R., Hayrapetyan, A.A., & Mkrtchyan, H.G. (2023). The mining and quarrying industry in Armenia: changes in fiscal regime and expected impact on tax revenues in the short run. *Eurasian Mining*. 1(39), p.93. doi: 10.17580/em.2023.01.20.

ներիս չեղարկման հետևանքով ազդեցությունը հավաքագրվող հարկային եկամուտների վրա:

- Հաշվարկել 2018-2022թթ.-ներին ընկերությունների կողմից վճարված իրական հարկերի և ռոյալթիի բոյանսի գործակիցները արտահանման հանդեպ:
- Ներկայացնել օրենսդրական փոփոխությունների հնարավոր ազդեցությունը հարկային եկամուտների վրա կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում, ինչպես նաև հստակեցնել օրենսդրական փոփոխությունների հետ կապված առաջնահերթությունները:

Գրականության ակնարկ: Հոգանը և Գոլդսվորթին (2010թ.)¹ ներկայացնելով մինչև 2010թ.-ը տարբեր երկրներում կիրառվող ռոյալթիների տեսակները եզրահանգել են, որ հանքագործական արդյունաբերության դեպքում օրենսդրության տեսանկյունից ադվալորեմային ռոյալթին պետք է համակցել ռենտայի կամ շահույթի վրա հիմնված գործիքակազմի հետ, քանի որ ադվալորեմային ռոյալթին կառավարության համար կապահովի նվազագույն հարկային մուտքեր, ինչը նշանակում է անցումը հիբրիդային համակարգին: Լիլֆորդը և Գույը (2021թ.) նշել են, որ ռոյալթիի բոլոր համակարգերն ունեն առավելություններ և թերություններ, և կառավարության ընտրությունը, հիմնականում կախված է այն հանգամանքից, թե որքան է տվյալ երկրի կախումն ռոյալթիի վճարներից որպես հարկային եկամուտների աղբյուր, իսկ ընտրության գործում առաջնային է համարվում բավարար չափով հարկային մուտքերի ապահովումը և վերջիններիս կայունությունը, որի արդյունքում արդյունահանման ծավալներից կախված ռոյալթիի համարգերին են նախապատվություն տալիս՝ հատուկ ռոյալթիներին, և առաջին հերթին, արժեքի հիման վրա հաշվարկվող (ադվալորեմային) ռոյալթիներին՝ շահույթի վրա հիմնված ռոյալթիների համակարգի հետ համեմատած և դա հնարավորություն է տալիս պարզեցնել հարկային վարչարարության գործընթացները²: ՄԱԿ-ը և վերջինիս Բնապահպանության բաժանմունքը (2018թ.) հանքագործական արդյունաբերության կայուն զարգացման տեսանկյունից՝ և հատկապես հարկային բարեփոխումների տեսանկյունից ներկայացրել են մի շարք առաջարկություններ՝ մասնավորաբար օրենսդրական դաշտի՝ հատկապես հարկային համակարգի կայունության ապահովում (որոշակի ժամանակահատվածի կտրվածքով), բնական ռեսուրսներից ստացվող եկամուտների հիման վրա բարեկեցության ֆոնդերի ստեղծում և այլն³: Դուդինեի և Ջալլեսի (2017թ.)¹ հարկային քաղա-

¹ Hogan, L. & Goldsworthy, B. (2010). International mineral taxation: experience and issues. In: Daniel, P., Keen, M., & McPherson, C. (eds.). *The Taxation of Petroleum and Minerals: Principles, Problems and Practice* (1st ed.) pp.140-143, 149. London & New York: Routledge & International Monetary Fund.

² Lilford, E. & Guj, P. (2021). Different Types of Mineral Royalties. In: Dilek, Y., Pirajno, F., & Windley, B. (eds.) *Mining Taxation. Modern Approaches in Solid Earth Sciences*, Vol. 18. p. 66. Cham, Switzerland: Springer. doi: 10.1007/978-3-030-49821-4_4

³ UNDP and UN Environment (2018). Managing mining for sustainable development: A sourcebook. Bangkok, Thailand: United Nations Development Programme. p.103.

քականության մշակման տեսանկյունից կարևոր է հաշվարկել հարկային եկամուտների բոյանսի գործակիցը² տնտեսությունում կայունության ապահովման տեսանկյունից՝ հատկապես կարճաժամկետ հատվածում:

Մեթոդաբանություն: Արտահանման տուրքերի մեծության և մեկ տոննայի տուրք/մեկ տոննայի արժեք հարաբերակցության հաշվարկ: 2021թ.-ի սեպտեմբեր ամսվա համար չեն ներկայացվում արտահանման տուրքերի մեծության և մեկ տոննայի տուրք/ արժեք հարաբերակցության մեծությունները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ անհնարին է պարզել, թե արդյո՞ք այդ ամսվա արտահանման ծավալները արձանագրվել են նախքան 2021թ.-ի հուլիսի 15-ին ԱԺ-ի կողմից ընդունված «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը, թե ոչ: Այս ցուցանիշների հաշվարկի համար հիմք է հանդիսացել Դոխոյանի և այլոց (2023թ.) կողմից առաջարկված մոտեցումը³: Տուրքերի մեծության հաշվարկի ժամանակ բացառվել են դեպի ԵԱՏՄ անդամ-երկրներ արտահանման ֆիզիկական ծավալները, ինչպես նաև դեպի երրորդ երկրներ 100կգ.-ից պակաս արտահանման ցուցանիշները (որը բավականին փոքր ծավալ է կազմել և էական ազդեցություն չէր ունենա հաշվարկված մեծությունների վրա), որով էլ մեր մոտեցումը տարբերվում է Դոխոյանի և այլոցի (2023թ.)⁴ մոտեցումից, ինչպես նաև մեր կողմից կատարված հաշվարկները հիմնվել են ՄԱԿ-ի «UN Comtrade Database» բազայի տվյալների վրա⁵: Դեպի երրորդ երկրներ արտահանելու դեպքում վճարման ենթակա արտահանման տուրքերի մեծությունները հաշվարկվել են եռամսյակների կտրվածքով՝ հիմք ընդունելով ԱՄՆ-ի նկատմամբ ՀՀ դրամի արժևորումը 2022թ.-ի ընթացքում⁶: Մեր կողմից հաշվարկված արտահանված ֆիզիկական ծավալների հիման վրա հաշվարկվել են տուրքերի մեծությունը՝ հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքում (առ. 15.07.2021թ.) սահմանված տուրքերի մեծությունը 260300, 261390, և 720270

¹ Dudine, P., & Jalles, J. T. (2017). How Buoyant is the Tax System? New Evidence from a Large Heterogeneous Panel. *Journal of International Development*. Volume 30, Issue 6, p. 962. doi:10.1002/jid.3332

² Ըստ Սեվիկի (2018թ.) հարկային բոյանսին բացատրում է, թե ինչպես են հարկային եկամուտները փոխվում բազայի (ՀՆԱ, ներմուծում և այլն) փոփոխության դեպքում: Հեղինակը տվել է հետևյալ սահմանումը. «տվյալ տարվա հարկային եկամուտների փոփոխությունը հարաբերած բազայի փոփոխության հետ» իրական արժեքների հիման վրա հաշվարկված: (Աղբյուր՝ Cevik, S. (2018). Unlocking Pakistan's Revenue Potential. *South Asian Journal of Macroeconomics and Public Finance*, 7(1), p.24. doi:10.1177/2277978718760068):

³ Dokholyan, S.V., Makaryan, A.R., Hayrapetyan, A.A., & Mkrtchyan, H.G. (2023). The mining and quarrying industry in Armenia: changes in fiscal regime and expected impact on tax revenues in the short run. *Eurasian Mining*. 1(39), pp.92-93. doi: 10.17580/em.2023.01.20.

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Trade Statistics Branch of the United Nations Statistics Division (2023). UN Comtrade Database. Retrieved from: <https://comtradeplus.un.org/TradeFlow>

⁶ ՀՀ ԿԲ (2023). «Դրամի նկատմամբ որոշ արժույթների միջին և ժամանակահատվածի վերջի դրությամբ փոխարժեքներ» բազա, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>

ծածկագրերով ապրանքային դիրքերի համար: ԱՄՆ դոլարով արտահայտված 1 տոննայի միջին արժեքը համապատասխան ժամանակահատվածի միջին փոխարժեքով բազմապատկելով՝ հաշվարկվել են դրամով արտահայտված մեծությունները, և դրա հիման վրա էլ օրենքով սահմանված մեկ տոննայի տուրքի մեծության և արտահանված մեկ տոննայի դիմաց ստացված ՀՀ դրամով արտահայտված հասույթի (արժեք) հարաբերակցությունը որպես մեկ տոննայի տուրք/մեկ տոննայի արժեք հարաբերակցությունը:

Հանքագործական արդյունաբերությունը ներկայացնող ընկերությունների կողմից վճարված հարկերի և տուրքերի (հարկային եկամուտների), ինչպես նաև բոյանսի գործակիցներ (արտահանման հանդեպ): Բոյանսի գործակիցները հաշվարկի հիմքում Հաուգթոնի (1998թ.) առաջարկված մոտեցումն է, որի հիման վրա էլ հաշվարկվել են այդ երկու գործակիցները¹: Գործակիցների հաշվարկը իրականացվել է 2018-2022թթ.-ի տարեկան ցուցանիշների իրական արժեքների հիման վրա: Ընկերությունների կողմից ընդհանուր վճարված հարկերի և ռոյալթիների պարագայում իրական արժեքները հաշվարկելու նպատակով որպես բազիսային տարի է վերցվել 2018թ.-ն և 2019-2022թթ.-ների իրական հարկերը հաշվարկվել են անվանական արժեքները ճշգրտելով 2018թ.-ի հիմքով հաշվարկված տվյալ տարվա ՍԳԻ-ով²: Իսկ իրական արտահանումը հաշվարկվել է որպես մի շարք ԱՏԳ ԱԱ վեցանիշ ծածկագրերի (260300, 260800, 261310, 261390, 261690, 720270) իրական արտահանման արժեքների հանրագումար (2018=100): Հաշվարկվել են 2018թ.-ի միջին տարեկան գները այդ ծածկագրերով ապրանքների համար, որոնց հիման վրա էլ՝ վերջիններիս իրական արտահանումը: 2021-2022թթ.-ի ընկերությունների կողմից ընդհանուր վճարված հարկերի իրական մեծություններից հանվել են իրական արտահանման տուրքերի մեծությունները:

Վերլուծություն: 2021թ.-ի չորրորդ եռամսյակում, երբ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը կազմում էր 480.68 ՀՀ դրամ³, մեկ տոննայի վաճառքից պոնձի խտահանքի տուրք/հասույթ հարաբերակցությունը միջինում կազմում էր 17.87%, իսկ երեք ծածկագրերով ապրանքները արտահանելիս պետական բյուջե վճարմանը ենթակա արտահանման տուրքերի հանրագումարը կազմել է 18.60 մլրդ ՀՀ դրամ (տե՛ս աղյուսակ 1): Հետագայում, երբ ՀՀ դրամը սկսեց արժուրվել ԱՄՆ դոլարի նկատմամբ (2022թ.-ին՝ 435.67 ՀՀ դրամ)⁴ և ՀՀ

¹ Haughton, J. (1998). Estimating tax buoyancy, elasticity, and stability, African Economic Policy Discussion Paper Number 11, Project EAGER, pp.1-2.

² ArmStatBank (2023) «Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 1950-2022թթ., ըստ տարիների և ըստ ցուցանիշների» առցանց տվյալների բազա, <https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb>:

³ ՀՀ ԿԲ (2023). «Դրամի նկատմամբ որոշ արժույթների միջին և ժամանակահատվածի վերջի դրությամբ փոխարժեքներ» բազա, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>

⁴ ՀՀ ԿԲ (2023). «Դրամի նկատմամբ որոշ արժույթների միջին և ժամանակահատվածի վերջի դրությամբ փոխարժեքներ» բազա, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>:

ընկերությունները արտահանում էին պղնձի խտահանքը միջինում ավելի ցածր¹ գներով, վերջիններիս համար արտահանման տուրքը որոշակիորեն լրացուցիչ բեռ էր 2022թ.-ի ընթացքում՝ միջինում կազմելով 23.35%, և նմանատիպ պատկեր էր արձանագրվել մոլիբդենի խտահանքի և ֆեռոմոլիբդենի կտրվածքով (տե՛ս աղյուսակ 1): 2022թ.-ին դեպի երրորդ երկրներ պղնձի խտահանք արտահանելու դեպքում վճարման ենթակա արտահանման տուրքը կազմել էր շուրջ 64.6 մլրդ ՀՀ դրամ, մոլիբդենի խտահանքի դեպքում՝ 7.15 մլրդ ՀՀ դրամ, իսկ ֆեռոմոլիբդենի պարագայում՝ 7.08 մլրդ ՀՀ դրամ (տե՛ս աղյուսակ 1): Իսկ 2022թ.-ին վճարմանը ենթակա տուրքերի մեծությունը կազմել էր 78.81 մլրդ ՀՀ դրամ (տե՛ս աղյուսակ 1), ինչն էլ նշանակում է, որ 2022թ.-ին ՀՀ կառավարությանը հաջողվեց զգալիորեն ավելացնել մուտքերը պետական բյուջե, սակայն որը մեկ անգամյա բնույթ էր կրելու և նման ծավալի հասնող մուտքեր պետական բյուջե գրեթե անհնար կլինի ապահովել միջնաժամկետ հատվածում, միայն եթե համաշխարհային շուկայում խտահանքերի գների կտրուկ աճ չարձանագրվի և ՀՀ դրամն ԱՄՆ դոլարի նկատմամբ կտրուկ չարժեզրկվի: Հետևաբար, կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում գրեթե անհնար կլինի լրացուցիչ 78.81 մլրդ դրամի հարկային եկամուտ ապահովել պետական բյուջե մեկ տարվա ընթացքում:

Աղյուսակ 1

Դեպի երրորդ երկրներ արտահանելու դեպքում վճարման ենթակա արտահանման տուրքերի մեծությունները և մեկ տոննայի տուրք/արժեք հարաբերակցությունը 2021թ.-ի IV եռամսյակում և 2022թ.-ին²

Ժամանակահատված	Վճարման ենթակա տուրք (մլրդ ՀՀ դրամ)			Մեկ տոննայի տուրք/մեկ տոննայի արժեք հարաբերակցություն		
	260300	261390	720270	260300	261390	720270
2021թ. IV եռ.	15.54	0.74	2.32	17.87%	11.18%	7.54%
2022թ. I եռ.	12.59	1.49	1.82	18.04%	11.49%	7.23%
2022թ. II եռ.	19.04	1.94	1.96	20.06%	12.48%	7.82%
2022թ. III եռ.	16.01	2.28	1.86	26.95%	15.72%	10.08%
2022թ. IV եռ.	16.94	1.44	1.44	28.35%	12.91%	7.90%
2022թ. տարեկան ցուցանիշ	64.58	7.15	7.08	23.35%	13.15%	8.26%

Եթե նախկինում ռոյալթիի վճարների հաշվարկելու համար սկզբից հաշվարվում էր այն դրույքաչափը, որը կիրառվելու էր ընկերության իրացման շրջա-

¹ World Bank (2023). Commodity Monthly Prices September 2023 Online Database. Retrieved from: <https://www.worldbank.org/en/research/commodity-markets#1>

² ՀՀ ԿԲ (2023). «Դրամի նկատմամբ որոշ արժույթների միջին և ժամանակահատվածի վերջի դրությամբ փոխարժեքներ» բազա, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>: ՀՀ օրենքը ««Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» առ 15.07.2021թ., ՀՕ-310-Ն: Trade Statistics Branch of the United Nations Statistics Division (2023). UN Comtrade Database. Retrieved from: <https://comtradeplus.un.org/TradeFlow>: Նշում՝ հեղինակի սեփական հաշվարկ: Հաշվարկի մեջ ներառված են 100 կգ-ն գերազանցող արտահանումը երրորդ երկրներ և չեն ներառվել դեպի ԵԱՏՄ անդամ-երկրներ արտահանման ծավալները:

նառության հիման վրա ՀՀ բյուջե վճարվող ռոյալթիի գումարը որոշելու նպատակով, ապա օրենսդրական փոփոխության համաձայն հստակ տրվում է բանաձև, որով հաշվարկում են ռոյալթիի վճարները 2023թ.-ից սկսած, և համեմատություններն երկու մեթոդաբանությունների միջև նպատակահարմար չէ:

Նոր հիփրիդային ռոյալթիի համակարգի պարագայում կարելի է եզրահանգել, որ միջնաժամկետ ժամանակահատվածում վճարվող ռոյալթիի մեծությունները հիմնականում կախված են լինելու համաշխարհային շուկայում մետաղների գներից, և որքան շատ բարձրանան գները, այնքան ավելի շատ գումարներ են վճարելու ընկերությունները, ինչը ևս որոշակիորեն հարկաբյուջետային քաղաքականությունը կդարձնի պրոցիկլիկ: Իսկ ռոյալթիի վճարները չեն կարող փոխհատուցել արտահանման տուրքերի չեղարկումից հետո ընկերությունների կողմից բյուջե կատարած ընդամենը մուտքերի ակնկալվող կրճատումը 2023թ.-ին և միջնաժամկետ ժամանակահատվածում:

Հանքագործական արդյունաբերությունը ներկայացնող ընկերությունների կողմից վճարված իրական ռոյալթիի ամենամեծ արժեքը 2020-2022թթ.-ներին արձանագրվել է 2021թ.-ին (51.51 մլրդ ՀՀ դրամ), իսկ նվազագույն մեծությունը՝ 2020թ.-ին (33.29 մլրդ ՀՀ դրամ), որն էապես չի տարբերվել 2022թ.-ի արժեքից (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

2018-2022թթ.-ներին հանքագործական արդյունաբերությունը ներկայացնող հիմնական ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի և վճարների ընդհանուր գումարները (մլրդ ՀՀ դրամ)¹

	Ընդամենը մուտքեր										Ռոյալթի						
	Անվանական					Իրական					Անվանական			Իրական			
	2018	2019	2020	2021	2022	2018	2019	2020	2021	2022	2020	2021	2022	2020	2021	2022	
ԶՊՄԿ	51.09	51.36	41.69	48.84	143.93	51.09	50.65	40.63	44.40	120.48	23.85	39.56	33.45	23.25	35.96	28.00	
Թեղուտ	3.97	2.00	3.74	15.33	12.35	3.97	1.97	3.65	13.93	10.34	5.29	7.35	1.10	5.15	6.68	0.92	
ԱՊՄԿ	2.03	1.80	1.59	3.68	19.59	2.03	1.77	1.55	3.35	16.40	1.21	4.60	2.27	1.18	4.19	1.90	
Չաարատ Կապ.	7.49	2.86	1.53	6.40	5.99	7.49	2.82	1.49	5.82	5.01	3.11	2.94	1.94	3.03	2.67	1.62	
ԱԼՀԿ	1.03	0.46	0.52	1.15	3.76	1.03	0.45	0.50	1.04	3.15	0.39	0.75	0.20	0.38	0.69	0.17	
Մեղրաձոր Գոլդ	0.14	0.31	0.34	0.89	-	0.14	0.30	0.33	0.81	-	0.32	0.15	0.12	0.31	0.14	0.10	

¹ ArmStatBank (2023) «Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 1950-2022թթ., ըստ տարիների և ըստ ցուցանիշների» առցանց տվյալների բազա, <https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb>: ՀՀ ՊԵԿ (2023). Առաջին 1000 խոշոր հարկ վճարողների կողմից 2018-2022թթ.-ներին հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում վճարված հարկերի մեծությունների ցանկերի առցանց տվյալների բազաներ, <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTILists>: ՀՀ ՊԵԿ (2023). Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործող հարկ վճարողների տարվա արդյունքներով վճարած հարկերի և վճարների 2020-2022թթ.-ներին առցանց տվյալների բազաներ, <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTILists..> <https://src.am/am/getMenusContents/120>: Նշում՝ հեղինակի սեփական հաշվարկ: 2018=100: Ռոյալթիները՝ հաշվետու տարվա համար հարկային հաշվարկով (հայտարարագրով) հաշվարկված: ԶՊՄԿ-Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ, ԱՊՄԿ-Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ, ԱԼՀԿ-Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ:

Լիճքվազ				0.94	4.37				0.86	3.66		1.30	0.94		1.18	0.79
Շնդամենը	65.76	58.78	49.40	77.24	189.99	65.76	57.97	48.14	70.21	159.04	34.16	56.66	40.02	33.29	51.51	33.50
Արտահ. տուրք				18.6	78.81				16.91	65.97						
Շնդամենը (առանց արտ. տուրքի)	65.76	58.78	49.40	58.64	111.18	65.76	57.97	48.14	53.30	93.07	34.16	56.66	40.02	33.29	51.51	33.50

Իսկ եթե իրական ռոյալթիների մեծությունները (տե՛ս աղյուսակ 2) համեմատենք 2020-2022թթ. իրական արտահանման արժեքների, ինչպես նաև ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքների հետ¹, ապա կարելի է եզրահանգել, որ փոխարժեքի տատանումը՝ հատկապես կտրուկ արժևորումը վճռորոշ գործոն կարող է լինել, որն էլ կպայմանավորի իրական ռոյալթիի արժեքների փոփոխությունները միջնաժամկետ հատվածում, եթե նույնիսկ համաշխարհային շուկայում մետաղների գները որոշակիորեն աճեն: Հետևաբար, եթե միջնաժամկետ հատվածում մետաղների գները համաշխարհային շուկայում բարձրանան, իսկ ՀՀ դրամը արժևորվի, ՀՀ դրամով արտահանված իրական ռոյալթիների վճարները կարող են նվազել՝ նույնիսկ իրական արտահանման աճի պարագայում, մինչդեռ հակառակը կարող է արձանագրվել, երբ գների որոշակի անկումն ուղեկցվի իրական արտահանման ծավալների աճով և ՀՀ դրամն արժեզրկում արձանագրի ԱՄՆ դոլարի նկատմամբ:

Այսպիսով, ռոյալթիի իրական վճարների տեսանկյունից վճռորոշ են համարվելու 2 գործոն՝ փոխարժեքի և համաշխարհային շուկայում գների տատանումը: Իսկ հիմք ընդունելով Լյոֆի և այլոց (2021թ.) փաստարկը հանքային ռենտայի վերաբերյալ որպես ոլորտի ընդհանուր հարկային բեռը նկարագրող ցուցանիշ՝ ոլորտի հետագա աճը խաթարելու տեսանկյունից², ինչպես նաև Մակարյանի և Դալլաքյանի (2023թ.) կողմից կատարված հանքային ռենտայի հաշվարկը ՀՀ-ի կտրվածքով 2018-2022թթ.-ների համար և վերջիններիս եզրահանգումը ստացված արդյունքների հիման վրա³, պարզ է դառնում, որ հիբրիդային ռոյալթիի նոր համակարգի ներդրումը կարող է միայն որոշակիորեն հարկային բեռ հանդիսանալ հարկ վճարողների համար միջնաժամկետ հատվածում, և այն պարագայում, երբ արձանագրվի ՀՀ դրամի արժևորում ԱՄՆ դոլարի նկատմամբ, հակառակ դեպքում այն չի կարող մեծ բեռ հանդիսանալ (հարկային պարտավորություն/հասույթ հարաբերակցության տեսանկյունից): ՀՀ հանքագործական արդյունաբերությունը ներկայացնող հիմնական ընկերությունների կողմից ՀՀ պե-

¹ Trade Statistics Branch of the United Nations Statistics Division (2023). UN Comtrade Database. Retrieved from: <https://comtradeplus.un.org/TradeFlow>: Նշում՝ սեփական հաշվարկ: 2018=100: ՀՀ ԿԲ (2023). «Դրամի նկատմամբ որոշ արժույթների միջին և ժամանակահատվածի վերջի դրությամբ փոխարժեքներ» բազա, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>:

² Löf, A., Löf, O., & Ericsson, M. (2021). Resource rents in the diamond industry 2014–19: Rents, issues, methods, and data availability. WIDER Working Paper 2021/39. Helsinki, Finland: United Nations University World Institute for Development Economics Research. p.2. doi:10.35188/UNU-WIDER/2021/977-8.

³ Makaryan A., & Dallakyan S. (2023). Mineral rents in Armenia. *Regional Problems of Transforming the Economy*. № 7 (153), p.87, 89. doi:10.26726/1812-7096-2023-7-82-90

տական բյուջե վճարված հարկերի և վճարների կտրվածքով իրական ամենամեծ մեծությունը 2018-2022թթ.-ներին (առանց արտահանման տուրքերի) արձանագրվել է 2022թ.-ին (տե՛ս աղյուսակ 2)՝ կազմելով 111.18 մլրդ ՀՀ դրամ (առանց վճարմանը ենթակա արտահանման տուրքերի հանրագումարի): Սա նաև պայմանավորված է այն հանգամանքով, որ 2022թ.-ի առաջին կեսին համաշխարհային շուկայում հատկապես պղնձի միջին գները՝ 2021թ.-ի համապատասխան ժամանակահատվածի հետ համեմատած ավելի բարձր էին¹, ինչպես նաև նրանով, որ ՀՀ դրամի արժուրումը հիմնականում արձանագրվել է 2022թ.-ի մայիս-հունիսից սկսած²:

Հետաքրքրական է նկատել, որ իրական հարկային մուտքերի կրճատումը (տե՛ս աղյուսակ 2) ոչ միշտ է ուղեկցվել իրական արտահանման ծավալների կրճատմամբ³, իսկ այս պարագայում ՀՀ կառավարության համար առաջնահերթ է ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ու վճարների (ինչպես նաև ռոյալթիի) բոյանսի գործակցի հաշվարկելը (արտահանման հանդեպ), ՀՀ կառավարության հարկազանձման առաջնահերթությունները՝ հստակեցնելու նպատակով: Կարելի է փաստել, որ հարկային (ընդամենը մուտքերի) բոյանսի գործակիցը արտահանման հանդեպ 2019-2022թթ.-ներին ոչ բոլոր տարիներին է եղել բացասական, և միջին ցուցանիշների, ինչպես նաև 2018-2022թթ.-ների իրական աճի տեմպերի հիման վրա հաշվարկված ցուցանիշների արժեքները եղել են դրական (տե՛ս աղյուսակ 3): Սա իր հերթին նշանակում է, որ հանքագործական ընկերությունների հարկմանը առնչվող օրենսդրությունը 2018-2022թթ.-ներին կարճաժամկետ հատվածում, ընդհանուր առմամբ, որոշակիորեն չի կարող կայունություն ապահովել հավաքագրվող հարկերի կայունության տեսանկյունից, հատկապես, երբ իրական արտահանման ծավալների կրճատումը ուղեկցվում է հավաքագրվող իրական հարկային մուտքերի կրճատմամբ, իսկ սա էլ նաև փաստում է այն մասին, որ հարկային եկամուտների հավաքագրումը պրոցիկլիկ է: Արտահանման հանդեպ ռոյալթիի բոյանսի գործակիցները 2021-2022թթ.-ներին բացասական են եղել, ինչը նշանակում է, որ նախկինում գործող ռոյալթիի հաշվարկի մեթոդաբանությունը հավաքագրվող ռոյալթիի կայունության տեսանկյունից կարող էր որոշակիորեն կայունություն ապահովել կարճաժամկետ հատվածում, հատկապես երբ իրական արտահանման ծավալների կրճատում արձանագրվեր (ՀՀ դրամի ԱՄՆ դոլարի նկատմամբ փոփարժեքի կայունության, կամ արժեզրկման դեպքում):

¹ World Bank (2023). Commodity Monthly Prices September 2023 Online Database. Retrieved from: <https://www.worldbank.org/en/research/commodity-markets#1>

² ՀՀ ԿԲ (2023). «Դրամի նկատմամբ որոշ արժույթների միջին և ժամանակահատվածի վերջի դրությամբ փոխարժեքներ» բազա, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>:

³ Trade Statistics Branch of the United Nations Statistics Division (2023). UN Comtrade Database. Retrieved from: <https://comtradeplus.un.org/TradeFlow>: Նշում՝ սեփական հաշվարկ: 2018=100:

Հարկային և ռոյալթիի բոյանսի գործակիցները (արտահանման հանդեպ)¹

	2019	2020	2021	2022	2019- 2021թթ. միջին	2019- 2022թթ. միջին	2021- 2022թթ. միջին	2018-2022թթ. (իրական աճի տեմպի հիման վրա հաշ- վարկված)
Հարկային բոյանսի (արտահանման հանդեպ)	-0.46	6.44	-1.19	35.77	1.59	10.14	17.29	3.07
Ռոյալթիի բոյանսի (արտահանման հանդեպ)	-	-	-5.12	-27.61	-	-	-16.37	-

Միջնաժամկետ հատվածում ռոյալթիի նոր համակարգի պարագայում ակնկալվում է, որ ռոյալթիի բոյանսի գործակիցներն (արտահանման հանդեպ) կդառնան դրական, ինչն էլ փաստելու է ռոյալթիի վճարների պրոցիկլիկ լինելու վերաբերյալ: Ընդհանուր առմամբ, ակնկալվում է, որ հանքագործական ընկերությունների հարկմանն առնչվող օրենսդրությունը (նաև ռոյալթիների վճարներին) կարճաժամկետ-միջնաժամկետ ժամանակահատվածում չի կարող կայունություն ապահովել հավաքագրվող հարկերի կայունության տեսանկյունից և այն պարագայում, երբ իրական արտահանման ծավալների կրճատմանը հաջորդում է հավաքագրվող իրական հարկային մուտքերի (նաև ռոյալթիների վճարների) կրճատումը: Սա էլ փաստելու է հանքագործական արդյունաբերությունը ներկայացնող ընկերությունների կողմից պետական բյուջե վճարվող հարկային մուտքերի և ռոյալթիների վճարների պրոցիկլիկ լինելու վերաբերյալ:

Հիմք ընդունելով Միացյալ ազգերի կազմակերպության և վերջինիս Բնապահպանության բաժանմունքի (2018թ.) առաջարկությունները² օրենսդրական դաշտի կայունության տեսանկյունից մեր կողմից առաջարկվում է հետևյալը՝

- *Ներդրումներ ներգրավելու տեսանկյունից օրենսդրական դաշտի կայունության ապահովում:* Ի տարբերություն Դոխոյանի և այլոց (2023թ.) առաջարկածի³, մեր կողմից առաջարկվում է «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի հոդված 7-ում լրացուցիչ սահմանել «կայունության պայմանագիր» և «կայունության ժամկետ» հասկացությունները և այդպիսի պայմանագիր կնքել

¹ Նշում՝ հաշվարկները իրականացվել են հեղինակի կողմից աղյուսակ 2-ի տվյալների հիման վրա՝ հիմք ընդունելով իրական արտահանումն (աղբյուր՝ Trade Statistics Branch of the United Nations Statistics Division (2023). UN Comtrade Database. <https://comtradeplus.un.org/TradeFlow>): 2018–100: Հաշվարկի մեջ չեն ներառվել 2021թ.-ի հոկտեմբեր-նոյեմբեր ամսիններին, ինչպես նաև 2022թ.-ի վճարմանը ենթակա արտահանման տուրքերի մեծությունները:

² UNDP and UN Environment (2018). Managing mining for sustainable development: A sourcebook. Bangkok, Thailand: United Nations Development Programme. p.103.

³ Dokholyan, S.V., Makaryan, A.R., Hayrapetyan, A.A., & Mkrtchyan, H.G. (2023). The mining and quarrying industry in Armenia: changes in fiscal regime and expected impact on tax revenues in the short run. *Eurasian Mining*. 1(39), p.95. doi: 10.17580/em.2023.01.20.

ներդրողների հետ ներդրումային ծրագրի ժամկետով կամ առնվազն 5 տարին գերազանցող ժամկետով (ինչը ամրագրված է Հոդված 7-ում), որը կսահմանվի կառավարության որոշմամբ ամեն մի նախագծի համար առանձին՝ հաշվի առնելով ներդրումների ծավալը, ներդրումային ծրագրի կարևորությունը (տեխնոլոգիաների կիրառում, արտադրանքի վերամշակման չափ և այլն): Օրենքում պետք է ամրագրել, որ կառավարությունը 5 տարին մեկ պետք է հրապարակի այն ոլորտների ցանկը, որոնց վրա կկիրառվեն այս օրենսդրական փոփոխությունները՝ հաշվի առնելով երկրի ռազմավարական զարգացման առաջնահերթությունները:

• *Գործող ընկերությունների համար օրենսդրական դաշտի կայունության ապահովում:* Արդեն իսկ գործունեությունը ծավալող ընկերությունների պարագայում հիմք ընդունելով այն, որ 2023թ.-ից ուժի մեջ մտած ռոյալթիի հիբրիդային համակարգը հարկային վարչարարության և ընկերության կողմից հարկերի վճարման տեսանկյունից այդքան էլ դյուրին չէ, ինչպես նաև Մակարյանի և Դալլաքյանի (2023թ.) եզրահանգումը վերջիններիս կողմից ՀՀ-ի համար հաշվարկված հանքային ռենտայի ցուցանիշների հիման վրա¹, առնվազ միջնաժամկետ հատվածում (5 տարի) ցանկացած հաջորդ ռոյալթիի համակարգի հետ կապված օրենսդրական փոփոխությունների պարագայում (գործող ռոյալթիի հաշվարկի համակարգի մեջ) օրենքով ամրագրել որպես այլընտրանքային մոտեցում ռոյալթիի հաշվարկի գործող համակարգին, որը կկիրառվի գործող համակարգի հետ զուգահեռ՝ ընկերությանը հնարավորություն ընձեռելով ընտրելու, թե որ համակարգի հիման վրա վերջինս կցանկանա հաշվարկել և վճարել ռոյալթիները, իսկ 5 տարի ժամկետը կսահմանվի՝ որպես անցումային շրջան, որից հետո ընկերություններն անցում կկատարեն կառավարության կողմից առաջարկված նոր համակարգի հիման վրա ռոյալթիներ վճարելուն:

Գիտական նորույթ: Բացահայտվել է հանքագործական արդյունաբերությանը վերաբերող 2021-2022թթ.-ներին օրենսդրական փոփոխությունների ազդեցությունը հավաքագրվող հարկային եկամուտների վրա կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում և համապատասխան առաջարկություններ են արվել օրենսդրական փոփոխությունների կտրվածքով:

Եզրակացություններ: 2022թ.-ին պղնձի խտահանքը միջինում ավելի ցածր գներով էր արտահանվում 2021թ.-ի համեմատ, որի արդյունքում արտահանման տուրքը որոշակիորեն լրացուցիչ բեռ էր 2022թ.-ի ընթացքում՝ միջինում կազմելով 23.35%: Նմանատիպ պատկեր էր արձանագրվել մոլիբդենի խտահանքի և ֆեռոմոլիբդենի կտրվածքով: 2022թ.-ին դեպի երրորդ երկրներ արտահանելու դեպքում վճարման ենթակա արտահանման տուրքը կազմել էր 78.81 մլրդ ՀՀ դրամ, իսկ սա

¹ Makaryan A., & Dallakyan S. (2023). Mineral rents in Armenia. *Regional Problems of Transforming the Economy*. 7 (153), p.87, 89. doi:10.26726/1812-7096-2023-7-82-90

նշանակում է, որ կառավարությանը հաջողվեց էապես ավելացնել հարկային մուտքերը, սակայն գրեթե անհնար կլինի ապահովել այս ծավալի լրացուցիչ հարկային եկամուտներ միջնաժամկետ հատվածում, միայն եթե համաշխարհային շուկայում խտահանքերի գների կտրուկ աճ չարձանագրվի և ՀՀ դրամն ԱՄՆ դոլարի նկատմամբ կտրուկ չարժեզրկվի: Նոր հիբրիդային ռոյալթիի համակարգի պարագայում միջնաժամկետ հատվածում վճարվող ռոյալթիները կախված են լինելու գներից, և որքան շատ բարձրանան, այնքան ավելի շատ գումարներ են վճարելու ընկերությունները, ինչն էլ հարկաբյուջետային քաղաքականությունը կդարձնի պրոցիկլիկ: Մյուս կողմից փոխարժեքի տատանումը վճարող գործոն կարող է լինել, ինչն էլ կայանանավորի իրական ռոյալթիի փոփոխությունները միջնաժամկետ հատվածում, եթե նույնիսկ գները որոշակիորեն աճեն: Այս պարագայում ռոյալթիի իրական վճարների տեսանկյունից վճարող են համարվելու 2 գործոն՝ փոխարժեքի և համաշխարհային շուկայում գների տատանումը: Ռոյալթիի նոր համակարգի ներդրումը կարող է միայն որոշակիորեն հարկային բեռ հանդիսանալ հարկ վճարողների համար միջնաժամկետ հատվածում (հարկային պարտավորություն/հասույթ տեսանկյունից): Հարկային բոյանսի (ընդամենը մուտքերի) գործակցի արտահանման հանդեպ միջին ցուցանիշների, ինչպես նաև 2018-2022թթ. իրական աճի տեմպերի հիման վրա հաշվարկված արժեքները եղել են դրական: Օրենսդրությունը կարճաժամկետ հատվածում, ընդհանուր առմամբ, որոշակիորեն չի կարող կայունություն ապահովել հավաքագրվող հարկերի տեսանկյունից (իրական արտահանման ծավալների կրճատումը ուղեկցվում է հավաքագրվող իրական հարկային մուտքերի կրճատմամբ)՝ փաստելով հարկային եկամուտների հավաքագրման պրոցիկլիկության մասին: Իսկ ռոյալթիի բոյանսի գործակիցներն (արտահանման հանդեպ) 2021-2022թթ.-ներին եղել են բացասական և միջնաժամկետ հատվածում ռոյալթիի նոր համակարգի պարագայում, կարելի ակնկալել, որ ռոյալթիի բոյանսի գործակիցները (արտահանման հանդեպ) կդառնան դրական, ինչն էլ փաստելու է ռոյալթիի վճարների պրոցիկլիկ լինելու վերաբերյալ: Առաջարկվել է սահմանել «կայունության պայմանագիր» և «կայունության ժամկետ» հասկացությունները՝ ներդրումների ներգրավման տեսանկյունից, միջնաժամկետ հատվածում ռոյալթիի համակարգի հետ կապված օրենսդրական փոփոխությունների պարագայում վերջիններս ամրագրել որպես այլընտրանքային մոտեցում գործող համակարգին՝ ընկերությանը հնարավորություն ընձեռելով ընտրելու նախընտրելի համակարգ անցումային ժամկետում (5 տարի):

Օգտագործված գրականության ցանկ

1. Cevik, S. (2018). Unlocking Pakistan's Revenue Potential. South Asian Journal of Macroeconomics and Public Finance, 7(1), 17–36. doi:10.1177/2277978718760068
2. Dokholyan, S.V., Makaryan, A.R., Hayrapetyan, A.A., & Mkrtchyan, H.G. (2023). The mining and quarrying industry in Armenia: changes in fiscal regime and expected impact

- on tax revenues in the short run, *Eurasian Mining*. 1 (39). 90-96. doi: 10.17580/em.2023.01.20.
3. Dudine, P., & Jalles, J. T. (2017). How Buoyant is the Tax System? New Evidence from a Large Heterogeneous Panel. *Journal of International Development*. Volume 30, Issue 6, pp. 961-991. doi:10.1002/jid.3332
 4. Haughton, J. (1998). Estimating tax buoyancy, elasticity, and stability, *African Economic Policy Discussion Paper Number 11*, Project EAGER, 8p. Retrieved from: https://pdf.usaid.gov/pdf_docs/PNACE024.pdf. Date of access: September 2, 2023
 5. Hogan, L. & Goldsworthy, B. (2010). International mineral taxation: experience and issues. In: Daniel, P., Keen, M., & McPherson, C. (eds.). *The Taxation of Petroleum and Minerals: Principles, Problems and Practice* (1st ed.) pp. 122-162. London & New York: Routledge & International Monetary Fund. Retrieved from: <https://www.international-arbitration-attorney.com/wp-content/uploads/arbitrationlaw1394930.pdf>. Date of access: September 2, 2023
 6. Lilford, E. & Guj, P. (2021). Different Types of Mineral Royalties. In: Dilek, Y., Pirajno, F., Windley, B. (eds.) *Mining Taxation. Modern Approaches in Solid Earth Sciences*, Vol. 18. pp. 43-69. Cham, Switzerland: Springer. https://doi.org/10.1007/978-3-030-49821-4_4
 7. Löf, A., Löf, O., & Ericsson, M. (2021). Resource rents in the diamond industry 2014–19: Rents, issues, methods, and data availability. *WIDER Working Paper 2021/39*. Helsinki, Finland: United Nations University World Institute for Development Economics Research. 26p. doi:10.35188/UNU-WIDER/2021/977-8. Retrieved from: <https://www.wider.unu.edu/publication/resource-rents-diamond-industry-2014%E2%80%9319>. Date of access: November 29, 2023.
 8. Makaryan A., & Dallakyan S. (2023). Mineral rents in Armenia. *Regional Problems of Transforming the Economy*. 7 (153), 82-90. doi:10.26726/1812-7096-2023-7-82-90
 9. UNDP and UN Environment (2018). *Managing mining for sustainable development: A sourcebook*. Bangkok, Thailand: United Nations Development Programme. Retrieved from: <https://www.undp.org/publications/managing-mining-sustainable-development>. Date of access: September 2, 2023
 10. ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» առ 15.06.2022թ., ՀՕ-149-Ն
 11. ՀՀ օրենքը ««Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» առ 15.07.2021թ., ՀՕ-310-Ն
 12. ՀՀ օրենքը ««Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» առ 15.06.2022թ., ՀՕ-150-Ն
 13. ArmStatBank (2023). «Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 1950-2022թթ., ըստ տարիների և ըստ ցուցանիշների» առցանց տվյալների բազա, <https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb> (վերջին մուտք՝ 08.09.2023թ.)
 14. ՀՀ ՊԵԿ (2023). Առաջին 1000 խոշոր հարկ վճարողների կողմից 2018-2022թթ.-ներին հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում վճարված հարկերի մեծությունների ցանկերի առցանց տվյալների բազաներ, <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTILists> (վերջին մուտք՝ 08.09.2023թ.)

15. ՀՀ ՊԵԿ (2023). Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործող հարկ վճարողների 2020-2022թթ.-ների արդյունքներով վճարած հարկերի և վճարների ցանկերի տվյալների բազաներ, <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTILists>, <https://src.am/am/getMenusContents/120> (վերջին մուտք՝ 08.09.2023թ.)
16. ՀՀ ԿԲ (2023). «Դրամի նկատմամբ որոշ արժույթների միջին և ժամանակահատվածի վերջի դրությամբ փոխարժեքներ» առցանց տվյալների բազա, <https://www.cba.am/am/SitePages/stateexternalsector.aspx> (վերջին մուտք՝ 27.09.2023թ.)
17. Trade Statistics Branch of the United Nations Statistics Division (2023). UN Comtrade Database. Retrieved from: <https://comtradeplus.un.org/TradeFlow>. Date of access: September 8, 2023.
18. World Bank (2023). Commodity Monthly Prices September 2023 Online Database. Retrieved from: <https://www.worldbank.org/en/research/commodity-markets#1>. Date of access: September 8, 2023.

References

1. Cevik, S. (2018). Unlocking Pakistan's Revenue Potential. *South Asian Journal of Macroeconomics and Public Finance*, 7(1), 17–36. doi:10.1177/2277978718760068
2. Dokholyan, S.V., Makaryan, A.R., Hayrapetyan, A.A., & Mkrtchyan, H.G. (2023). The mining and quarrying industry in Armenia: changes in fiscal regime and expected impact on tax revenues in the short run, *Eurasian Mining*. 1 (39), 90-96. doi: 10.17580/em.2023.01.20.
3. Dudine, P., & Jalles, J. T. (2017). How Buoyant is the Tax System? New Evidence from a Large Heterogeneous Panel. *Journal of International Development*. Volume 30, Issue 6, pp. 961-991. doi:10.1002/jid.3332
4. Houghton, J. (1998). Estimating tax buoyancy, elasticity, and stability, *African Economic Policy Discussion Paper Number 11*, Project EAGER, 8p. Retrieved from: https://pdf.usaid.gov/pdf_docs/PNACE024.pdf. Date of access: September 2, 2023
5. Hogan, L. & Goldsworthy, B. (2010). International mineral taxation: experience and issues. In: Daniel, P., Keen, M., & McPherson, C. (eds.). *The Taxation of Petroleum and Minerals: Principles, Problems and Practice* (1st ed.) pp. 122-162. London & New York: Routledge & International Monetary Fund. Retrieved from: <https://www.international-arbitration-attorney.com/wp-content/uploads/arbitrationlaw1394930.pdf>. Date of access: September 2, 2023
6. Lilford, E. & Guj, P. (2021). Different Types of Mineral Royalties. In: Dilek, Y., Pirajno, F., Windley, B. (eds.) *Mining Taxation. Modern Approaches in Solid Earth Sciences*, Vol. 18. pp. 43-69. Cham, Switzerland: Springer. https://doi.org/10.1007/978-3-030-49821-4_4
7. Löf, A., Löf, O., & Ericsson, M. (2021). Resource rents in the diamond industry 2014–19: Rents, issues, methods, and data availability. *WIDER Working Paper 2021/39*. Helsinki, Finland: United Nations University World Institute for Development Economics Research. 26p. doi:10.35188/UNU-WIDER/2021/977-8. Retrieved from:

- <https://www.wider.unu.edu/publication/resource-rents-diamond-industry-2014%E2%80%939319>. Date of access: November 29, 2023.
8. Makaryan A., & Dallakyan S. (2023). Mineral rents in Armenia. Regional Problems of Transforming the Economy. 7 (153), 82-90. doi:10.26726/1812-7096-2023-7-82-90
 9. UNDP and UN Environment (2018). Managing mining for sustainable development: A sourcebook. Bangkok, Thailand: United Nations Development Programme. Retrieved from: <https://www.undp.org/publications/managing-mining-sustainable-development>. Date of access: September 2, 2023
 10. HH o'renqy' «Hayastani Hanrapetowt'yan Harkayin o'rensgrqowm lracowmner & p'op'oxowt'yownner katarelow masin» ar' 15.06.2022t'., HO'-149-N]
 11. HH o'renqy' ««Petakan towrqi masin» o'renqowm p'op'oxowt'yown & lracowm katarelow masin» ar' 15.07.2021t'., HO'-310-N]
 12. HH o'renqy' ««Petakan towrqi masin» o'renqowm p'op'oxowt'yown katarelow masin» ar' 15.06.2022t'., HO'-150-N HH o'renqy' ««Petakan towrqi masin» o'renqowm p'op'oxowt'yown katarelow masin» ar' 15.06.2022t'., HO'-150-N
 13. ArmStatBank (2023). «Spar'oghakan gneri indeqsy' Hayastani Hanrapetowt'yownowm 1950-2022t'., y'st tarineri & y'st cowcanishneri» ar'canc tvyalneri baza, <https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb> (verjin mowtq` 08.09.2023t'.)
 14. HH PEK (2023). Ar'ajin 1000 xoshor hark vtwaroghneri koghmic 2018-2022t'.,-nerin hownvar-dektember amisneri y'nt'acqowm vtwarvac' harkeri mec'owt'yownneri cankeri ar'canc tvyalneri bazaner, <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTILists> (verjin mowtq` 08.09.2023t'.)
 15. HH PEK (2023). Metaghakan o'gtakar hanac'oyi ardyownahanman t'owyltvowt'yown stacac' y'nderqo'gtagorc'ogh hark vtwaroghneri 2020-2022t'.,-neri ardyownqnerov vtwarac' harkeri & vtwarneri cankeri tvyalneri bazaner, <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTILists>, <https://src.am/am/getMenusContents/120> (verjin mowtq` 08.09.2023t'.)
 16. HH KB (2023). «Drami nkatmamb orosh arjhowyt'neri mijin & jhamanakahatvac'i verji drowt'yamb p'oxarjheqner» ar'canc tvyalneri baza, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx> (verjin mowtq` 27.09.2023t'.)
 17. Trade Statistics Branch of the United Nations Statistics Division (2023). UN Comtrade Database. Retrieved from: <https://comtradeplus.un.org/TradeFlow>. Date of access: September 8, 2023.
 18. World Bank (2023). Commodity Monthly Prices September 2023 Online Database. Retrieved from: <https://www.worldbank.org/en/research/commodity-markets#1>. Date of access: September 8, 2023.

**ՀԱՆՔԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ 2021-2022ԹԹ.
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՍՏԱԿԵՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ**

Աննա Ռուզվելտի Մակարյան

Համառոտագիր: **Հոդվածի արդիականություն:** Հանքագործական արդյունաբերությանը վերաբերող 2021-2022թթ.-ներին օրենսդրական փոփոխությունների ազդեցության բացահայտումն հավաքագրվող հարկային եկամուտների վրա կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում և համապատասխան առաջարկությունների ներկայացումը պայմանավորում է **տվյալ ուսումնասիրության անհրաժեշտությունը:**

Նպատակ: Ներկայացնել ՀՀ հանքագործական արդյունաբերության ընկերությունների կողմից դեպի երրորդ երկրներ արտահանելու դեպքում վճարման ենթակա հաշվարկված արտահանման տուրքերի, հաշվարկված հարկային և ռոյալթիի (արտահանման հանդեպ) բոյանսի գործակիցների վերլուծության հիման վրա կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում հարկային եկամուտների վրա օրենսդրական փոփոխությունների հնարավոր ազդեցությունը, ինչպես նաև հստակեցնել օրենսդրական փոփոխությունների հետ կապված առաջնահերթությունները:

Տվյալ նպատակին հասնելու համար դրվել են հետևյալ **խնդիրները՝**

- Հաշվարկել ՀՀ հանքագործական արդյունաբերությունը ներկայացնող ընկերությունների կողմից դեպի երրորդ երկրներ արտահանելու դեպքում վճարման ենթակա արտահանման տուրքերի մեծությունները, պարզելու վերջիններիս չեղարկման հետևանքով ազդեցությունը հավաքագրվող հարկային եկամուտների վրա:

- Հաշվարկել 2018-2022թթ.-ներին ընկերությունների կողմից վճարված իրական հարկերի և ռոյալթիի բոյանսի գործակիցները արտահանման հանդեպ:

- Ներկայացնել օրենսդրական փոփոխությունների հնարավոր ազդեցությունը հարկային եկամուտների վրա կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում, ինչպես նաև հստակեցնել օրենսդրական փոփոխությունների հետ կապված առաջնահերթությունները:

Ստացված հիմնական արդյունքներ: Դեպի երրորդ երկրներ արտահանելու դեպքում վճարման ենթակա արտահանման տուրքերի շնորհիվ կառավարությանը հաջողվեց էապես ավելացնել հարկային մուտքերը 2022թ.-ին, սակայն գրեթե անհնար կլինի ապահովել այս ծավալի լրացուցիչ հարկային եկամուտներ միջնաժամկետ հատվածում: Նոր հիբրիդային ռոյալթիի համակարգի պարագայում միջնաժամկետ հատվածում վճարները կախված են լինելու համաշխարհային շուկայում գներից՝ հարկաբյուջետային քաղաքականությունը դարձնելով պրոցիկլիկ: Հարկային բոյանսի (արտահանման հանդեպ) գործակցի միջին և 2018-2022թթ. իրական աճի տեմպերի հիման վրա հաշվարկված ցուցանիշները եղել են դրական:

Գիտական նորույթ: Բացահայտվել է հանքագործական արդյունաբերությանը վերաբերող 2021-2022թթ.-ներին օրենսդրական փոփոխությունների ազդեցությունը հավաքագրվող հարկային եկամուտների վրա կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում և համապատասխան առաջարկություններ են արվել օրենսդրական փոփոխությունների կտրվածքով:

Բանալի բառեր. արտահանման տուրք, ռոյալթի, հիբրիդային համակարգ, գների տատանում, հարկային բոյանս, հանքագործական արդյունաբերություն, Հայաստան

ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ ИЗМЕНЕНИЯ, СВЯЗАННЫЕ С ГОРНОДОБЫВАЮЩЕЙ ПРОМЫШЛЕННОСТЬЮ В 2021-2022 ГОДА И НЕОБХОДИМОСТЬ В УТОЧНЕНИИ ПРИОРИТЕТОВ

Анна Рузвельтовна Макарян

Аннотация. Актуальность статьи. Выявление влияния законодательных изменений в 2021-2022 года (связанных с горнодобывающей промышленностью), на налоговые доходы в краткосрочной и среднесрочной перспективе и представление соответствующих предложений, что и обуславливает необходимость данного исследования.

Цель статьи. представить возможное влияние законодательных изменений на налоговые доходы в краткосрочной и среднесрочной перспективе на основе анализа рассчитанных экспортных пошлин при экспорте в третьи страны, подлежащих уплате компаниями, представляющих горнорудную промышленность РА, а также рассчитанных коэффициентов плавучести (налоговой и роялти к экспорту), чтобы выявить те приоритеты, которые связаны с законодательными изменениями:

Для достижения данной цели были поставлены следующие **задачи**:

- Рассчитать объемы экспортных пошлин при экспорте в третьи страны, подлежащих уплате компаниями, представляющих горнорудную промышленность РА для того чтобы выявить влияния этих пошлин на собираемые налоговые доходы вследствие их отмены;
- Рассчитать коэффициенты плавучести общей суммы реальных налогов и роялти к экспорту, уплаченных компаниями в 2018-2022 года;
- Представить возможное влияние законодательных изменений на налоговые доходы в краткосрочной и среднесрочной перспективе, а также уточнить приоритеты, связанные с законодательными изменениями.

Основные результаты. Благодаря пошлинам, подлежащим уплате при экспорте в третьи страны, правительству удалось существенно увеличить налоговые поступления в 2022 г., тем не менее, почти невозможно будет обеспечить такой высокий объем дополнительных налоговых поступлений в среднесрочной перспективе. В случае новой гибридной системы роялти, в среднесрочной перспективе выплаты по роялти будут зависеть от цен на мировом рынке, что сделает налогово-бюджетную политику проциклической. Средний коэффициент налоговой плавучести (к экспорту)

за 2018-2022 года, а также тот же самый показатель, рассчитанный на основе реальных темпов роста, были положительными.

Научная новизна. Выявлено влияние законодательных изменений, связанных с горнодобывающей промышленностью за 2021-2022 года, на собираемые налоговые доходы в краткосрочной и среднесрочной перспективе и были сделаны соответствующие предложения в разрезе законодательных изменений.

Ключевые слова: экспортная пошлина, роялти, гибридная система, колебания цен, налоговая плавучесть, горнорудная промышленность, Армения

LEGISLATIVE CHANGES RELATED TO THE MINING INDUSTRY IN THE PERIOD 2021-2022 AND THE NEED TO SPECIFY THE PRIORITIES

Anna Roosevelt Makaryan

Abstract. Relevance of the article. The relevance of the study is determined by the need to identify the impact of fiscal regime changes in the mining industry (initiated and adopted in the period 2021-2022) on the tax revenues to be collected in the short run and medium term, and by the need of proposing relevant recommendations.

The purpose of the article is to provide the possible impact of changes in fiscal regime on tax revenues in the short run and medium term based on the analysis of calculated export duties to third countries payable by companies of the mining industry of Armenia, and calculated buoyancy coefficients (tax revenue and royalties with respect to the real exports), as well as to clarify the priorities related to legislative changes.

The following objectives have been set to achieve the above-stated purpose:

- to calculate the amounts of export duties while exporting to third countries paid by mining companies of Armenia to identify the impact on tax revenues to be collected upon abandoning the export duties;
- calculate the buoyancy coefficients of total taxes and royalties with respect to exports, paid by companies from 2018 to 2022;
- to identify the possible impact of changes in fiscal regime on tax revenues in the short run and medium term, and specify the priorities related to the legislative changes.

Main results. Due to export duties paid for exporting to third countries, the RA Government managed to increase tax revenues in 2022. Nevertheless, it would be virtually impossible to ensure such a high amount of additional tax revenues in the medium term. In the case of a new hybrid royalty system, payments will depend on the prices on the international market in the medium term, which could make the fiscal policy pro-cyclical. The average coefficient of tax buoyancy (with respect to exports) for the period 2018-2022, and the coefficient calculated based on real growth rates were positive.

Scientific novelty. The impact of changes in the fiscal regime regulating the mining industry (for the period 2021-2022) on tax revenues to be collected in the short and medium term has been identified and respective recommendations were proposed concerning the legislative changes.

Keywords: export duty, royalty, hybrid system, price volatility, tax buoyancy, mining industry, Armenia